միայնակ և թէ ընկերութեամբք եղած են բարեպաշտ անձինք՝ որ Եկեղեցեաց Հ՛աշոյներ նուիրած են գիներն ինքեանք հաստուցանելով, որոց անուանքը հետզհետէ պիտի հրատարակեմք։

ԴՊՐՈՑ.

Դպրոց ամսագրոյ Ա. Թիւ Յունվար ամսագիրը լոյս տեսաւ, որ արժանի է համակրութեան։

Կ՚ցուսամք որ նորա պարբերակութիւնք հետզհետէ կգրաւեն հետաքրքիր ընթերցողները և նոցա թիւ կրազմապատկի, որով և Երժ. Խմբագիրն ևս կխրախուսուի իւր ջանից մէջ։

Նորա պայմաններն արդէն ծանուցուած են ընթերցողաց։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻՑ ԲԻՒՋԱՆԴԵԱՆ.

ՑՈՑՍ.

Ինչպէս երկու շաբաթ առաջ ծանուցինք, Արմաշի վանուց Տոյս անուն ամսական Հանդէսը՝ որ ժամանակէ մը հետէ դադարած էր կարևորագոյն պատճառներով, Ներկայ տարւոյս սկիզբէն դարձեալ ի լոյս գալ սկսաւ։ Արդէն մայրաքաղաքս հասած է Յունվար ամսոյ թերթը պարբերակութիւնն՝ օգտակար, լեզուն՝ բուն հայկական ու կոկիկ, և տպագրութիւնը՝ խիստ մաքուր։

Ցկ երեսէ կբաղկանայ. գինն է ամեն տեղ ոչ համար, մէկ տարին՝ երեք արծաթ մէճիտ, վեց ամսոց համար երկու արծաթ մէճիտ առանց ծախսուց ճանապարհի։

Ներկայ թերթին պարունակութիւնն է՝ Ազգային վերջին անցից վրայ. — Լեզուի վրայ. — Քատագովութիւն քրիստոնէութեան. — Ընկերսիրութիւն. — Դերովբէի օրհնութիւնը — Դասեր առտնին տնտեսութեան. — Բանաստեղծութիւն. — Առակ. — Առտնին առողջաբանութիւն։

Անտարակոյս եմք, թէ մեծ ընդունելութիւն և քաջալերութիւն պիտի գտնէ Արմաշի պատուարժան Ուխտին այս օգտակարագոյն երկասիրութիւնը՝ օգտակարն, բարին ու գեղեցիկն ընտրելու կարողութիւն ու ճաշակ ունեցող ամեն ազգայնոց կողմանէ։

Փունջ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ Կ ՊՕԼՍՈՅ.

(Շարունակութիւն)։

Եւ սուրբ Յերուսաղէմայ եկին ԺԲ սեազլուխք ոմանք միարանք էին Սուրբ Յակոբայ վանից Հայոց, և ոմանք ուխտաւորք էին, յոյժ աղաղակիւ բողոք բարձեալ առ Թուրքին մեծն գանկատեցան ի Մինաս վարդապետէն, որ էր արքեպիսկոպոս Սուրբ Երուսաղէմայ, և արդուհաւն Թուրքին մեծին իւրեանց են տրվեր. գանկատ արդուհալիս էր այս. վանից զմիարանքն ցըրվէր է, թէ դուք ձեր քսակից կելէք և զհանպերձն ի ձէնջ հագէք, երկու՝ այն էր միւս գանգատն թէ մեր վանքն ՃՌ ղուշ պարտուց ներքոյ ձգեց. երրորդ գանկատն այն էր թէ վանից յորջաբ որ զգեստ, սկիհք, խաչք, բուրվառք, կանթեղք, քշոցք, գաւազանք և այլ եպիսկոպոսաց զգեստք պատարագի, թաղեր, ձէվահիր քարերով մարգարտաշար ակնակուռք, և սրբոց մասունք. Դ սէրէթ սնտուկ մեծամեծ լի կուզրած ուղարկեց Ըստամպօլ, որ Ըստամպօլու եարամազ մարդիքն եղին գրաւ գրամի Ինկլէզ պաղիրկեանին մօտ ձեռամբ Ինկլէզ էլչիսուն, մեր վանքն կողոպտեաց և յիշատակ տներն մաղազաները ծախեց. վասն յԱստուծոյ թող լինի, ազատեա զմեր մանատրքն ի ձեռաց Մինաս վարդապետին։ Եւ նոյն ժամայն կոչեաց զմեզ Վէզիրն և նախատեց զմեզ թէ այսպէս բան որ կա՝ լինի, էր չես իմացներ։ Ես ասի՝ չեմ լսած, և այն սեազլուխք իմ մօտ չեն եկած։ Գնա քննեա և տես թէ զով կուզեն, մէ-

հիլ մուստահաք զով կու տեսանեն, զայն արզ արա որ նորա տանք Մեր Եազուր մանասթիրն, քննեցաք, ոմանք Ամասիացի Կայծակ Գալուստ վարդապետ խնդրեցին, ոմանք Սարի Մաթէոն խնդրեցին, Առաստեան ժամուն ես միամիտ կայի յեկեղեցին, Զուխտար եկաւ տարաւ զմեզ Սարայն. ասաց ահա Սուլթան Մուստաֆան քեզ շնորհեց յԵրուսաղէմայ Հայոց Մեր Եաքուպ մանաստիրն, վար տօվա էյլէ. Հապա ի հալաթ հոգոյց ինձ, փառօք մեծաւ ուղարկեց եկեղեցին, Եւ վասն Մինաս վարդապետին Վէղիրն կամէր թէ բերթ մի յարգիլէր. յոտն անկեալ աղաչեցի թէ այլ չի խառնվիր, ինք իւր հալովն թող նըստի ի վանք. երբ որ խառնըվի՝ այն ժամանակն ես կու ծանուցանեմ՝ դու դիտես. յայնժամ լըվաւ աղաչանաց մերոց, վէքիլ ուղարկեցաք ի Յերուսաղէմ, և մեք գնացաք Էտրէնու ի Ըստամպօլ, նաւ բռնեցաք վասն ուխտաւորաց գնալ յԵրուսաղէմ, և զուխթաւորքն ուղարկեցաք գնացին ի սուրբ յԵրուսաղէմ. և մինչ քարոզեաք Ըստամպօլ, Գուանդէ սինեօռ էլչի պէկն զիւր Սահէթճի Սարգիս անուն թէրճիմանն ուղարկեալ էր մեր մօտ թէ իմ խաթերն համար թող իրիճա անէ զայն Էտրէնու Եմիրեմ պատրիարքին մասնած Գ. քահանայքն ազատել, զինչ դրամ որ գնա՝ ես կուտամ. մարդ ուղարկեցի Էտրէնէ. նոցա ազատութեան ֆէրման բերի, Ըստամպօլու Ղայմախամէն այլ հրաման առի և ողորմութեամբն յԱստուծոյ ազատեցի զայն Գ. քահանայքն ի Թէրխանու զընտանէն և բերի մօտս, և կոչեցի զՍարգիս թէրճիմանն Գուանցոյ սինեօռ էլչի պէկին, հիսապ արանք որ էճ դոշ. էր գնացեր, բեր զդրամն որ տանք ի տէրն ազատինք. այսօր վաղն ասկով չերեր, ես այլ ամաչեցի որ գնայի իւրմէ ուղէի, նորա խաթերն պարտք արի տրվի և զքահանայքն առի հետս գնացի ի Էտրէնէ, դրամին կուսպասէի, եկին նոցա համախոհքն, ուժով քաշեցին զքահանայքն փախուցին, և վասն դրամին սուտ եկաւ Թէրճիմանն. չեմ գիտեր թէ էլչի պէկն չիտուր մի, թէ չէ թէրճիման Սարգիսն սատանութիւն արար. և այն ամուճա Վէղիրն վասն խոցոյն և տկարութեանն հանեցին վէզիրութենէն, և եկն Տալտապան Վէղիրն Պաղտատու, գալըմ մարդ էր յոյժ. գնացին Հայոց միջէ չարք ոմանք արզուհալ արարին վասն իմ թէ ահա Աւետիք փաթուրին Գրոանկի թապի եղող Գ. քահանայ տուտսաղքն՝ որ մահապարտք էին, կաշառ առաւ փախուց. Իրրև լուաւ Տալտապան Վէղիրն՝ յայնժամ այլագունեալ բարկութեամբ լցեալ տարաւ զիս յատհան հարցաւ ուր են Էստամպօլու բերած Գ. տուտսաղ քահանայք. ասի եկան իւր աղգականքն բռնութեամբ քաշեցին, չեմ գիտէր թէ ինչ արարին. զայն ուժով քարշողաց միջէն էր որ կրկին արզուհալ էին արարեր վասն իմ, անդ է. բռնեցին Գ. մարդ և նոցա տեղն ուղարկեցին ի Թէրխանան Ըստամպօլու, և զիս նախատանօք ի զընտան եդին թէ կու սպանանեմ. թէ գտանես զնոսա՝ կազատիս, և թէ չի գտանես՝ կու մեռանիս. կայի յոյժ լաղագին, մինչև ԻԷ օր մնացի ի բանդ. եկան ի մէջ գիշերի Բ տաճիկ՝ տուտսաղաց զընլուխն կտրեցին՝ տարեալ Սարայի դուռն ձգեցին, և ինձ պատվէր տվին թէ վաղ գիշեր քո գլուխդ կտրելոց են, պատրաստութիւնդ տես. այլ յոյս ապաւէնս ինքն տէր մեր Յիսուս Քրիստոս է և բարեխօս սուրբ կոյսն Մարիամ աստուածածինն է. աղաչանաց լսեցին գոլով գիր արզուհալ մի գրել տվի տաճկերէն Շէխիսլամի էֆէնտուն՝ որ էր ծանօթ յԱրզուրում, զոր Խելիլ փաշէն ազատութեանս պատճառ եղև, ուղարկեցի, և նա ասաց Տալտապանին թէ Նորա պատիարքութեան մանստան և Երուսաղէմայ յառաջնորդութիւնն Սուլթան Մուստաֆան է տվեր, նորա չըրախն է, թէ ըսէ՝ խաթրն կու մնայ. նոյն ժամայն գթութեամբն յԱստուծոյ մարդ ուղարկեց ազատեաց զմեզ ի բանտէն. եկա գնացի ի Կոստանդնուպօլիս, զի մեծ խռովութիւն էր եկեր. Ոմաննէս վարդապետն նստեալ էր ի տեղ պատրիարքի Հայոց. վասն հաւատոյ երկճղի էին եղեալ, ոմանք Պօղոսեան և ոմանք Ապօղոսեան, Թուրքն չի գիտեր զբանն հաւատոց, միշտ խռովութիւն լինելն կամ.

Դեռ չէի գնացեալ Ըստամբօլ, հետ Ոմաննէս վարդապետին Իզմիրցոյ գնացեր են ի Ղայմախամին դիւանն. «Հեր մէջ զիւր հաւատոյն դարձող և Գուանկին հաւատն մնող մարդիքն ովք են՝

ասացէք. մինչև ի Դ, Ե. հազար հոգի կու ժողովին, մի ըստ միոջէ զայն զարձողաց զանուանս կու գրեն տէֆտէր կու առնեն ՃԻԵ հոգի, և Եուսուֆ փաշան՝ որ Ըստամպօլու զայմախամ էր, զտէֆտէրն կուղարկէ Տալտապան վէզիրին, և վէզիրն այլ կամեցաւ զայն ՃԻԵ հոգին կոտորել և զսպրանքն միրիին զարթ անել, և զաղայքն գերել։ Շէյխիսլամն ասեր էր թէ՝ կոչեա զԱւետիք պատրիարքն և հարց նորա. կոչեաց և զմեզ Տալտապան վէզիրն և հարցաւ մեզ այսպէս. բան կայ, դու էր չես ասեր. պատրաստութիւնդ տես որ զարուՃի պաշի յուղարկեմ Ըստամպօլ, որ գնոսա ջարդեն և զապրանքն և զաւակքն որդիք և գլուխքդ պէկլիկ զարթ անեն։ Նոյն ժամայն լըցաւ աչքերս իմ արտասուօք. այլ ոչ կարացի յետ դարձուցանել զխօսքն, զի յարեանարբումարդ էր՝ վախեցա, ասացի դու գիտես. ելա անտից գնացի ի Շէյխիսլամն մօտ. ոտն անկայ արտասվաթոր աչօք ասացի. «Զքեզ և զՍուլթան Մուստաֆան մեղաց կու խնայեմ, զէրէ մեծ մեղաց տէր կու լինիք։—Այն ևհարց թէ ո՞րպէս մեղաց. ես պատասխանեցի թէ—այն տէֆտէրն որ եկեր է Ըստամպօլու, ամենեքեան ոչ են այնպէս. թէ անմեղ մարդիքն զուր տեղն մեռանին մեղք չէ՞ մի։—Նա ասաց և մեք և մեծն մեր ոչ կամիմք զուր տեղն մեռանի մարդ. հարցաւ ինձ թէ ի՞նչ է քո խնդիրքն։—Իմ խնդիրքս այն է որ մէօհլէթ տաք ինձ, մի ուղարկէք զարուՃի կոտորել զնոսա, երկայնամիտ լերուք, ինձ հրաման տրվէք գնալ Ըստամբուլ և քննել զնոսա, և թէ մեր հաւատացն ելեալ ուրիշ հաւատ փոխեալ են, և կամ ձեզ խային են եղեալ, զայնպիսիսն տէֆտէր առնեմ բերեմ հրամանուցդ. նոյն ժամայն դուք գիտէք։ Տաճկերէն թարգմանած արապի գրով Աւետարան կայր, զայն տարի Շէյխիսլամին, ահա այս է մեր հաւատացած գիրքն, սորանէ զատ ուրիշ հաւատ չենք գիտեր։—Ասաց, դուք Քրիստոսի ի՞նչ կասէք, մարգարէ՞ կու խոստովանիք թէ Աստուած։—Ես ասի, զի՞նչ կու հարցանես վասն Քրիստոսի. զձեր Մահմէտն Օմէրն յորժամ տիրեցին յաշխարհով, որ տաճկացաւ՝ ապրեցան. ով որ դէմ եղեր՝ ջարդեց. և մեր մեծաւորքն իւրեանք իւրեանց կամաւն ետուն բերդերուն բանալիքն հնազանդեալ, խնդրեցին թէ զմեզ խարաճ կապէ և մեր հաւատն բռնենք որ զՔրիստոս աստուած և որդի յաստուծոյ կու խոստովանինք. և նոքա հաւանեցան, թէ Մահմէտն և թէ Օմէրն տրվին ի ձեռս մեր շաղաւարթլամա, երթամամբ ուխտ և դաշինք եղին՝ թէ որովհետև դուք ձեզնէ հնազանդեցաք և խարաճ կուտաք մեզ, այսուհետև ձեր մարն իմ մալիս պարապար, ձեր երդն իմ երդիս պարապար, ձեր զաւակքն իմ զաւակացս պարապար, ձեր արիւնն իմ յարեանս պարապար, որպէս որ կու պաշտէիք զՔրիստոս աստուած և զՄարիամ սուրբ կոյսն Աստուածածին, դուք գիտէք ձեր հաւատն։ Ըզձեր մեծաւորաց հրամանն այս է. մեք ամենեքեան յորչափ որ յայս աւետարանին թապի որ կայ՝ ամենեքեանքս զՔրիստոս Աստուած և որդի յաստուծոյ կու խոստովանիմք։ Հարցաւ թէ ո՞ւր է այն շաղաւաթլամայն։—Մէկն ձեր մօտն՝ մէկն մեր մօտն է, մարրն Երուսաղէմ է, սուրաթն հետ ինձ է։—Բիր տեսանեմ ասաց, գնացի բերի տվի իւրեան Երաբեվար լիզվաւ, ոսկով է գրեալ. տարաւ ցոյց տրվաւ Սուլթան Մուստաֆէին. և միւս օրն գնացի կրկին ոտն անկա աղաչեցի զի արգելցէ զզարուՃի ուղարկելն Ըստամբ, և անձն առի թէ երթամ քննեմ, երբ որ մեր հաւատացն վրայ հաստատ են և զհարկապահանջութիւնն և զխարաճն կուտան. միայն զպաքերնին կուտեն, իւրեանք գիտեն, զօրով պաք չի լինիր։ Հրաման էառ ինձ գնալ ի Ըստամպօլ. և ասի թէ այն տեղաց վէքիլ նստող Ովանէս վարդապետն վասն ազահութեան դրամ կաշառք առնելու պատճառաւ շատն զուր կասէ ի վերայ նոցա. Տալտապան վէզիրն ասաց ինձ թէ միթէ դու Գուանկաց կողմէ՞ն ես որ նոցա տիրութիւն կառնես. ես քաջ գիտեմ որ ՃՇմարիտ է. զի Պաղտատ փաշա էի, Փարիզն Բ. փարիզ էր եկեր, այն տեղաց ըստանեներն զամն դարձուցեր էին. եկեղեցի էին շիներ՝ քակեցի ղեկեղեցին. փէշման եմ որ ոչ սպանեցի զնոսա. զՇէյխիսլամ էֆէնտին խարեցիր, զիս այլ կուզես որ խարես. էֆէնտուն խաթէրն համար գնայ այս անգամ Ըստամպօլ, տեսնեմ ի՞նչ խարեր կու բերես. թէ ծուռ խապար որ բերես, յառաջ զքեզ ըսպանեմ։ Գնացի ի Կոստանդնուպօլիս, Ովաննէսն փախեալ

գնաց ի Ադէմիստան. և ժողովեցի միահամուռ եկեղեցեաց քահանայք և առ հասարակ ժողովուրդք մինչև Գ՚Ռ մարդ աւելի կամ պակաս, և միահամուռ գոչէին աղաղակէին թէ մեք սոցա ձեռացն չունիմք հանգստութիւն՝ այս ՃԻԵ մարդոցն, մէխանայն կուգեան, պահոց օրերն միս կուտեն, կու զեխին. որդւոց տէր ենք, կուտեսանեն կութերահաւատին. կամ՝ սոցա հախէն եկո և կամ մեք այլ մեր գլխոյն ճար գտանենք, ուրիշ պատրիարք խնդրենք. և ես սկսեցայ Նոցա մխիթարական բանիւ խրատական բանիւք քարոզել և մխիթարել և նախատել զայն ՃԻԵ հոգին՝ վասն շահելոյ զնոսա, մինչև խաղաղեցաւ ժողովուրդն. և ի մէջ Նոցա են ԺԸ մարդ չարք և ագահք և կողոպտողք եկեղեցեաց, որ միշտ գրգռիչք չարեաց և եկեղեցեաց զգրամն զաֆթեր են՝ իւրեանց զհարկապահանջութիւնն կուտան, և միշտ պատրիարքաց բանին և երուսաղէմայ բանին կու խառնըվին, և զՄինաս վարդապետն Նոքա ձգեցին պարտուց մէջ. ես միշտ խաղաղութեան կու ջանայի, Նոքա միշտ յորոգայթ պատրաստէին ինձ. գնացին Նոցանէ Գ մարդ, մէն Շահամիր օղլի Առաքէլ և միւսն Սրապիոն և միւսն Հալուշ Արրահամ՝ ի Էտրէնէ Տալտապան վէզիրին արզուհալ տվին վասն իմ թէ՝ թող գայ, Երուսաղէմայ ուղարկած ուխտաւորաց առած գրամին հիսապն տայ. իւրեանք զողք և աւազակք են որ զՄինաս վարդապետն այնչափ պարտուց մէջ կոխեցին և սպասք եկեղեցւոյն Լօթռան Անկլէզին գրաւ տվին, և պիտի ուզէաք, փախան Ըստամպոլու իւրեանց չարութեանն ապաւինելով մատնեցին զմեզ Տալտապանին և նա մեկ մուսպշիր աղա մի ուղարկեց, եկաւ Ըստամպոլ, զմեզ տարաւ Էտրէնէ. գնացաք Էտրէնէ ի Վէզիրին դիւանն, և մեք հանեցաք զՍուլթան Մուստաֆէի տված հրամանն վասն Երուսաղէմայ՝ ցոյց տուաք. ահա մեք սովաւ զաֆթեր ենք արեր կուժողովենք զգրամն, վանաց զպակասութիւնն կու տեսանենք, և սոքա ի՞նչ հրամանաւ ինձանէ հիսապ կուգեն. ահա Կոստանդնուպոլիս գնացաք, քննեցաք, սուտ էր. այն Ոմաննէս վարդապետն փախաւ. ահա չարեաց գլուխքն սոքա են, դու գիտես, Ըստամպոլու ՃԻԵ հոգին ազատեցան կոտորմանէ չարքռնաւորին ձեռացն, և որդիքն և դստերքն ազատեցան գերի լինելոյն, և եղև խաղաղութիւն ի մէջ ժողովրդեան. զի զայն Շահամիր օղլի Առաքէլն և Զալուխ Արրահամն նոյն ժամայն կալաւ վէզիրն եղ ի Ըստամպոլու Թէրսխանէ, զընտանեաց հէսիս արարին. և Թուրքին վէզիրն խրոխտայր ի վերայ իմ միշտ թէ ահա յայտնի է որ դու ես նոցա թապի ես՝ որ նոցա տիրութիւն կառնես, պատճառ եղիր որ չի ջարդեցի զնոսա, նախ զքո գլուխդ կտրեմ, ապա թէ նոցա հախէն գամ, ԳՌԵՃ զրշս առաւ, ապա թողլ ետ որ գնացի Ըստամպոլ, յԱստուծոյ արդար դատաստանաւն Թուրքին մեծն նորա գլուխն կտրեց, որպէս զՓարաւոն կորեաւ, և փրկեցան ժողովուրդք, և եղ վէզիր զՀրատին, և ես գնացի Ըստամպոլ իմ բանիս հետ։

Զօրքն Թուրքին ապստամբեցան, զԽէշիմ օղլին կտրատեցին, զՂայմախամն փախուցին և իւրեանք իւրեանց վէզիր եղին, և կոխեցին բազումք մեծատանց տունք, կողոպտեցին, և զթուխաղք զընտանաց ազատեցին կաշառօք, և զիմ օթեւանքն՝ Իսկիւտարու սարայն՝ զոր իմ մալովս եմ ստացեր, կոխեցին, կողոպտեցին և զիս տարեալ ի յԷտրդուլէն հէսիս արին մինչև գնացին Էտրէնէ հանին զՍուլթան Մուստաֆայն ի թախթէն և նստուցին զՍուլթան Ահմէտն, և զՇէխիսլամն սպանին. և եկին ի Ըստամպոլ, և զիս ուղարկեցին Բ չաւուշով ի Ամաստ տասին, անդ մնացի Ա տարի, աղաչանաց արզուհալ առաքեցի Թուրքին մեծաւորին, ողորմեցաւ մեր աղաչանացն, ազատեաց զմեզ, և ես երկրպագեալ աստուծոյ ամենակարողին զոհացայ զտեսանէ ազատողին համայնից, գնացի ի Հալապ, այն տեղոյս Հայոց ժողովուրդն զամենայն մարմնոյ պակասութիւնս լցին, պատվօք ճանապարհեցին որ կամք ունէի գնալ ի վանքն իմ Երզնկան՝ որ շինեցի. Բաւուր ճանապարհ մնաց որ հասանէի ի վանքն, եկն Ըստամպոլու հրաման թէ դաս Ըստամպոլ։ Իբրև գնացի Ըստամպոլ, Գալուստ վարդապետն նստէր Պատրիարք ի տեղս. Ա տարին փախեալ էր ի յԱմասիա և Նեսսէս վարդապետն էր ի տեղս. և յորժամ ետես զիս թուրքին մեծաւորն, տըվի զարզուհալն, և ծանուցի թէ քո հայրն Եր-

զընչ՝ու վանքն եռուր և քոյ եղբայրն Ըստամպօ-
լու և Երուսաղէմայ զպատրիարգութիւնն եռուր,
և զու աղատեցիր զմեզ յԱվրատ ատասուն, ա-
հա խնդրեմ որ զու այլ կրկին տաս զԸստամպօ-
լու պատրիարքութիւնն և սուրբ Երուսաղէմայ
Մինաս վարդապետին տեղն, ահա նա վաղճան-
եալ է, չի լինի թէ ուրիշ մարդ ա՛ցնի ի տեղն,
զի իմ վարդապետին և զիս արհիական իշխանու-
թեամբ եպիսկոպոս օրհնողին յսմիոն է, մեր
յօրինօքն ճանապարհ իմն է։ Եւ հարցաքննեաց
որ ճշմարիտ էր, և եկեալ ժողովեցան բազում
ժողովուրդք թէ տեղացի և թէ վաճառականք,
վկայեցին զմեր լաւութիւնն և խնդրեցին թէ զնա
կո՛ցնի՛ք, և նոյն ժամայն նա ևս շնորհեաց հրա-
ման նստիլ ի Կոստանդնուպօլիս և տիրել ըզ-
սուրբ Երուսաղէմայ Հայոց վանիցն սուրբ Յա-
կոբայ, և կապա հագոյց։ Ներստանք Ըստամպօլ
յամենայն պատրիարքութեան Հայոց եկեղեցին
Սուրբ Աստուածածնայ, և ըստ չափոյ և կարո-
ղութեանն ողորմութեամբ յաստուծոյ վարէաք
զիշխանութիւն պատրիարքութեան, կարեաց մե-
ծոց քարոզէաք խրատական բանիւք։ Եւ Մինաս
վարդապետին վէքիլ Երեմիայն՝ Ս. Յակոբ առա-
քելոյն Գլխաւորին յօրինակաւ և անուամբ վաղ-
ճանեալ Մինաս վարդապետին և Ինկլիզ էչուն
ձեռաքն Ինկլիզ պազիրկեանէն (առնուած) գրա-
մին թէմէսիկ էր տվեր. ԺԲ մարդով միարանեալ
արգուհալ արին վասն իմ թուրքին մեծին թէ՝
որովհետև Մինաս վարդապետին տեղն նստաւ,
նորա պարտքն թող վճարէ, ահա մեք ԺԲ հոգի
քէֆիլ ենք Ինկլիզի գրամին որ տալոց ենք ԻԲՌ
ղրշ. մեզ հրաման տուր որ Աւետիք վարդապե-
տէն առնունք զայս գրամն։ Եկն հրամանաւ մու-
պաշիր, տարաւ զմեզ մեծ դիւանն, պահանջեցին
ի մենք զԻնկլիզին ԻԲՌ ղրշն. բազում խօսից
յետոյ հարցաւ ինձ վէզիրն թէ ձեր սահմանն
այն է որ մին պարիարքն մեռանի և նորա տեղ
նստողն հատուցանէ զպարտս մեռելոյն։ Եպ ա-
սացի ոչ այդպէս, և չէ մեր սահմանն. եթէ ինձ
գրամ տվեր են, կամ երաշխաւոր եղեալ եմ նո-
ցա, ես ոչ ճանաչեմ զնոսա։ Ասաց նոցա վէզի-
րըն թէ զայս Աւետիք փաթրիկն կու ճանաչէ՞ք.
նոքա ասացին չէ. և որպէս այդ մարդիքն որ քէ-
ֆիլ են Մինաս վարդապետին պարտուց և գրա-
մին ձերոյ հատուցանելոյ, այս Աւետիք վարդա-
պետն ալ նոյնպէս քէֆիլ եղե՞ւ թէ ես հատու-
ցանեմ։ Ասին չէ։—Դորա գրամ տվե՞ր է։—Չէ։
—Ապա որպէս տացէ ձեզ գրամ։

Այն քէֆիլքն՝ Երեմիայն, Սրապիոնն, Քէօ-
միւրճի Պէքքասանն, Ճինեան Ովանէսն պատաս-
խանեցին թէ Մէս. Եագուբ մանաստուրին վրայ
ենք խարճեր. յայժմս սա է տէր մանաստուրին,
սա տացէ զպարտս մանաստուրին։ Ես պատաս-
խանեցի նոցա՝ եթէ մանաստիրին եկեղեցին շի-
նեալ են, տունք և օտաներ շինեալ են, կամ ըզ-
գեստ անօթ, զարդարանք եկեղեցւոյ, յիշատակք
արծաթեղէն, ոսկեղէն, մարգարտեղէն ակամբ պա-
տուականաւ արարեալ են մանաստրին, արտ, այ-
գի, պահճա, խանութ և այլ յայտնի բան թէ
ունին արած, թող տեղն ցոյց տան թէ սա շինե-
ցաք, թող լինի՝ տամ. եթէ վանից վրայ խարճած չունին,
զի՞արդ տացից սոցա գրամ։ Ասա-
ցին տեղն կանենք և ահա ունինք թէմէսիկ սուրբ
Յակոբայ Գլխաւորին մօհրովն որ վանից պարտք է։
Ես ասի. այս մօհրն ոչ է աստուածաշէն որ մարդ
չկարենայ շինել, այլ մարդաշէն է. թէ կամենայ-
ոք՝ Ի այսպէս մօհր կու շինէ կու կոխէ թխթի
վերայ, զի՛նչ որ կամի զայն կու գրէ։ Յետս նա-
յելով գնացին. կրկին վէզիրին դիւանէն Ղալէս-
կէրի դիւան, դատաւորաց դիւան տարին զմեզ.
ողորմութեամբն Աստուծոյ զերծաք ի նոցանէ.
մինչ մէկ տարի զայս տաման քշեցին հետս իմ և
ոչ կարացին առնուլ, քէն պահին ինձ թէ այս
գրամնիս չի կորիր. թէ ի ծով թէ ի ցամաք կա-
մա յակամայ զայս գրամս ի ձէնք և ձեր մանաս-
տիրէն կառնուք։ Ես ասի, Աստուած մեծ է և
իւր ողորմութիւն շատ է։ Նոցա քէֆիլին մէկն
որ Երեմիա կասէին՝ մեռաւ, մնացին նոքա։ Եւ
յաւուր միում գնացի ի Պէկօղլին Ղալաթիոյ ի
սարայն էլչի պէկին մօտ ողջունել զնա, Գուան-
ցայու թագաւորաց թագաւորին և զպատկերն
սուրբ նկարեալ են ի օտան էլչի պէկին, տեսի և
համբուրեցի փափաքմամբ սրտիւ և ցանկայի թէ
ե՞րբ լինիցի որ զդպլի աչքք ճշմարիտ զիւր օրհ-
նեալ տեսոյն արժանանամ և համբուրեցից ըզ-
պատուականդան յոտից նորա, և ընդունէի սուրբ

յորհնութենէ Նորա, և աչք իմք քրիստոնեա թագաւոր տեսանել, ապա մեռնէի. գոհութիւն Քրիստոսի որ հասայ մինչև այս տեղս, բայց տիւ և գիշեր միշտ փափաքիմ, միթէ մարդասէրն Աստուած սէր և քաղցրութիւն արկանէ զ՝իրա սուրբ թագաւորին ո՛ր զթացեալ եղկելոյս և արժանացուսցէ զիս իւր օրհնեալ տեսոյն և համբուրել զսուրբ և յերկնաշունչ զգարշապարս ոտիցն, և առնուլ զօրհնութիւնն, միթէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զինքն իւր տեսոյն արժանացուսցէ և յերկնից անանց արքայութիւնն պարգևեսցէ. որ է անզբաւ յաւիտեանս յաւիտենից ամէն։ Աստուած հասուսցէ ի փափաքանաց իմոց, ապա մեռայց, ամէն։

Եւ յետոյ յորժամ Նստա ի Կոստանդնուպոլսի մանսուպ պատրիարգութեան, եղի վէքիլ ըզ-Մարտիրոս վարդապետն, և դրսի քահիեա զՊալիքէսէրցի Հայրապետն. մինչ Ը ամիս տիրեցին, մէկ ստակ ցոյց ոչ եռուն ինձ, և զպարտատերքն իմ վրայ կուղարկէին՝ զիմ վաստակած դրամն այլ կառնէին, զի հաւատացեալ էի Նոցա, և առանց իմ հրամանի ուրիշ մարդկանց դրամ կառնէին վասն անուան իմոյ. երկուքն ալ մի կամք մի խորհուրդ լինելով իւրեանք զդրամն դիղեցին և ինձ պարտք կուտեցին. ծանեա զնոցա խարթախութիւնն, կոչեցի հիսապն տեսա վէքիլ Մարտիրոս վարդապետին, ամիսն ԳԾ դրշէն մինչև Ը ամիսն ԲՌԴԾ դրշ ելաւ վերայն խարեց թէ գնամ ըներիմ, փախաւ ապստամբեաց, գնաց հետ թշնամեացս և Ինկլիզ պապիրկեանին և նոցա էլչուն հետ միաբանեցան նա և Հայրապետն, տէր կայցին նոցա դրամին՝ թէ դու մեզ օգնէ որ զպատրիարքութիւնն մեզ տացէ, զբո դրամն կրձկենք ի սուրբ Յակոբա վանիցն վրայ. Նոքա ուրախութեամբ յանձն առին կատարել նոցա կամքն և եկեղեցեաց երեցփոխանքն զդրամ եկեղեցոյ զիւրեանց հարկն տային, և քաղէին ոչ (՞). ցոյց տային դրամ եկեղեցոյ և զպակասութիւնն ոչ տեսանէին. ժողովեցան ժողովուրդն կարծեաք մինչ Ռ հոգի, այլ աւելի, Թուրքին մեծին բողոք բարձեալ աղաղակեցին թէ մեր եկեղեցիքն սոցա ձեռն գերի է, վասն Աստուծոյ սիրուն աղատեա. արդուհալ գրեալ էր զանուանս նոցա. Վէզիրն այլ կոչեաց զնոսա. ոմանք փախեան և ոմանս բռնեցին Ե հոգի բշեցին Սախըզ մինչ Ը ամիս. Սախըզու մեղ մեղայի գիր էին ուղարկեր թէ այլ չը խառնվինք, զմեզ աղատութեան ճար արա. զնոսա մեղային հաւատացի, գնացի Վէզիրէն խնդրեցի զազատութիւն նոցա. նոյն ժամայն շնորհեաց զազատութիւնն. նոքա ևս գնացին միաբանեցան հետ նոցա. զայն Մարտիրոս վարդապետն Երզընկան մէկ ազքատ քրիստոնէի որդի էր, ժամանակ մի մեր մօտ կարդաց, գնաց ամուսնացաւ, զկարդ քահանայութեանն մեք տվաք, սարկաւագութիւն և աւագ սարկաւագութիւն. յետ ժամանակաց զկին մեռաւ. եկն Ըստամպոլ Սուլթան Մուստաֆէ ժամանակի վեղար անցուցաք զգլուխն կրօնաւորութեան, ուղարկեցաք Իզմիր Նուիրակ. եկն կրկին Ըստամպոլու պատրիարքութեան վէքիլ եղի, այդպէս խայինութիւն արար, և ես Փանցու էլչի պէկին մարդ ուղարկեցի թէ մէկ շէհիյէ պէտք է որ զմայրս յԵրուսաղէմ ուղարկեմ, իւր ծանօթ լիցի զարիտան Նորա. Աստուած իւրեան կենդանութիւն տա, մարդ էր ուղարկեր ծովեզերն և բռնեալ զշէհիյէն և զմայրս իմ և փոքրաւորք գնացին խաղաղութեամբ։

Եւ տէֆթէրտար էֆէնտին զզայլոյ տարվան զմիրի դրամն խնդրեաց թէ ահա քո տեղոյդ և մանսուպիդ ցանկացող կա, տուրս տուր որ մեզարէր առնունք. գնացի պարտոք առի ՌԲԾ դրշ տվի, գնացի միամիտ տեղս Նստայ։ Յետ քանի մի աւուրց լըվա որ Մարտիրոս վարդապետն և Հայրապետն և երեցփոխանքն որ մանզուլ էին, և այն Ինկլիզին պաղրկեանն և Նոցա Էլչուն թէրճիմանն, և Նոցա դրամ առնող պարտականքն՝ որ առեալ են զդրամն իւրեանց տուն և խանութ և սէրմիյէն արարեր, զպարտքն ձգեալ են ի վանից վրայ, Նոքա և Նոցա աղգականք և բարեկամք, և այն մարդիքն որ զերկու կանայք ունէին և զեւտի կին թողուլ տըվի, Նոքա միմեանց գրոհ տըվեալք գնացին արզուհալ տըվին Թուրքին մեծին իմ վերայ թէ՝ էրմէնի միլլէթն իսլալ կանէ, իրր թէ ֆուէնգ կանէ, չունք ուզեր զնայ. ահա այս Մարտիրոս վարդապետն բուն էրմէնի է, մեզ լաւ է, զսա կու խնդրենք, նա այլ ըրխար էր արեր թէ թող լինի, ձեր ուզածին տանք. յառաջմ Ինկլի-

գին էլչին պարգևք էր ուղարկեր հետ իւր թէր-ձիմանն. այնպէս էր ասեր վէզիր քեահեասի Օսման աղան թէ թող արզուհալ տան մեծ թուրքին, Իրրև լրվա՝ գնացի Տէֆտէրտարէն զլրամն յետ ուղեցի, որովհետև մանուշն այլոց կուտաս, բարի. ես այլ կերթամ յԵրուսաղէմ։ Դեռ տարեգլուխ Դ ամիս կայ, ապա թէ գալ տարին մտանէ՝ Դ ամսվանէն անցա՝ նոր տված դրամն տուր որ տէրն տամ, զի պարտօք եմ առեր։ Նա պատասխանեց թէ գնամ վէզիրին հարցանեմ. թէ ասէ տուր՝ թող լինի տամ։ Միւսում օրն յանկարծակի Բ Տիւան Զաւուշի եկան, ի ձեռն ունէր հրաման թէ Աւետիք մանզուլ փանրիկ Պօհճա ատասանրա զալէպէնտ, ֆէրմանրմ օրմատուճա իմրա օրմասրն։ Բ փոքրաւորովս Ը օր գնացաք ի Պօհճա ատասին լալագին թէ՝ այս ի՞նչ փորձանք էր եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց. զիմ ֆըռանկութիւնս այն էր որ պատարագի հետ բաժակին ջուր կու խառնէի, Մարտիրոսն փոքրաւոր էր, գիտէր զի Հայոց ազգն յորժամ յիշատակն դնեն, վարագուր կու քաշեն, մարդ չի տեսաներ, վրդովմունք չի լինի տէրի ծածուկ կուխառնէի, միայն հնազանդիլ կուսուցանէի. Բ, այն էր իմ ֆռանկութիւնս՝ որ Հայոց ազգն ասէ՝ սուրբ Հոգի Աստուած բոխումն ի հօրէ և ի յորդւոյ ըստ Եպիրանու. այլ չիմ գիտեր զօրէնս և զտոմարս ֆռանկաց ցանկայի գնալ ի Հռոմ, հնազանդիլ սրբազան փափին և ընդունիլ զօրհնութիւնս նորին և ուսանիլ զամենայն զկարգ և զկրօնս Լատինաց, զի ոչ եղէ ձեռնհաս. միտքս զիտաւորութիւնս այն էր թէ գնամ յԵրուսաղէմ՝ քաղաքաց եպիսկոպոս զիր մարդ ուղարկեմ և հրաւիրեմ գալ ի սուրբ Երուսաղէմ, և նոքօք գնալ պատրաստութեամբ ի սուրբ գերեզման մայր սուրբ եկեղեցեաց յամենն սուրբ առաքելոց գլխաւորաց սուրբ Պետրոսի և սուրբ Պօղոսի, զոր և Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաստատուն պահեսցէ մինչ ի կատարած աշխարհի ամէն *)։

(Մ-ՅԻ-Ն Ի ՅԵՐՈՒՍԱՂԷՄ)

(*) Աւետիք Պատրիարքին գրչեն եղած այս տողերուն, ինչպես նա եւ ուրիշ շատ կեսերուն կասկածելի ըլլալն եւ հիվլիթաց ներշնչութեամբ գրուած ըլլալու հաւանականութիւնն արդէն ծանուցած ենք լրագրոյս 1489 թուով։

ՍՈՎ.

Պօլսոյ ազգ. լրագրաց մէջ ցաւ ի սիրտ կընթեռնումք՝ զի Գաղատիոյ կողմեր սով կրաիրէ և մեր ազգայինք յանհնարին տագնապած և տառապած՝ իւրեանց եղբարց օգնութեանց անհամբեր և ակնապիշ կըսպասեն։

Ո՛չ սակաւ կմխիթարուիմք՝ երբ կընթեռնումք՝ զի ի Պօլսոյ

Էնկիւրիի սովատանջ խղճալեաց օգնութեան համար զթասիրտ ազգայնոց կողմէ առատաձեռն նուիրատուութիւնք սկսան։

Վսեմախոհ բարերար մը, որ իր անունը ծածուկ պահելու սովորութիւն ունի միշտ, հինգշաբթի օրը Փափազեան Մեծ. Գէորգ էֆէնտիի ձեռամբ 100 լիրայ ղրկեց Շամլեան Յովհաննէս էֆէնտիին, որ անմիջապէս հեռագրով Էնկիւրի հասուց (*)։

Յակոբեան Մեծ Միքայէլ և Կիւմիւշկէրտանեան Մեծ. Տիգրան էֆէնտիներն, որք մարդասիրական գործերու մէջ միշտ առաջին ըլլալու ազնիւ բնաւորութիւն ունին, հինգշաբթի օրէն ի վեր իրենց բոլոր գործերը թողուցած՝ անձամբ Հայ վաճառականաց և սեղանաւորաց սենեակները կըպտտին. նուէր կը հաւաքեն, և արդէն 300 լիրայի մօտ ստակ հաւաքած են, որոյ 200 լիրան Էնկիւրիւ ղրկուեցաւ հեռագրով։

Պատրիարքարանի կողմէն կազմուած յանձնաժողովն ալ, որոյ Մեծ. անդամոց անուններն յետագայ նամակին մէջ կը տեսնուին, նոյնպէս հանգանակութիւն հաւաքելու ձեռնարկած են։

Ասկէց զատ Փափազեան Մեծ. Գէորգ էֆէնտին ալ անձամբ հանգանակութիւն հաւաքելու եղած է։

Այս ազնիւ փութաջանութեանց և անձնուիրութեանց շնորհիւ կը յուսացուի որ քանի մ՚ աւուր մէջ առ նուազն 5–600 լիրայի գումար մը կը հասնի Էնկիւրիւ, և տեղւոյն խղճալի ազգայինք սովամահ մեռնելու վտանգէն կազատին։

Մասիս Թ. 1546 Ապրիլ 18։